№ 22 ԹԻՖԼԻՍ ՇԱԲԱԹ ՅՈՒՆԻՍ 24 — 1895 — ԹԻՖԼԻՍ ՇԱԲԱԹ ՅՈՒՆԻՍ 24 № 22

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

«ՇԱՒԻՂԻ» տարեկան գինը 10 դրան, կէս տարուանը 6 դրան։ Առանձին համարները 5 շահի։

Արտասահման տարեկան 8 ֆր. կամ 3 բուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 բուբ.։

Արտասահմանից փողի համար պիտի դիմել հետևեալ հասցէով. Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

ՇԱՒԻՂ

«ՇԱՒԻՂԸ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է 10-ից մին չև 2 ժամը. (բացի կիրակի և տօն օրերից։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով՝ իւրաքանչիւր բառին մի անգամուայ համար 1 շահի։ Արտասահմանի յայտարարութիւնները բառին 1 կոպէկ։

Նամակների, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան՝ հասցէ. Rédaction «CHAVIGH» Téhéran. (Perse)

ԱՋԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ունայն յոյսերով կշտանում ենք.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Վատերը մեր մէջ պակաս չեն. Նամակ Էնզէլիից. Նամակ Մարազայից. Նամակներ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլի տեսութիւն. Արտաքին լուրեր—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ—Յայտարարութիւններ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Անկարգութիւնները Գ. ձեմարանում։

ՈՒՆԱՅՆ ՅՈՅՍԵՐՈՎ ԿՇՏԱՆՈՒՄ ԵՆՔ

Ոչ մի փորձ, նոյն իսկ մօտիկ անցեալի փորձերը՝ մեզ չը կարողացան լրջացնել։ Հայը դեռ նոյն, գրեթէ երեխայամիտ, վարդագոյն երազներով գոհ լինող օդալին ամրոցների տիրապետութեամբ և ունայն յոյսերով կշտացող՝ ժողովուրդն է։ Եթէ նրանից խլում են ամեն բան և տալա տալիս են նրան մի գլգլեակ, ահա նա սկսում է իր յափշտակողին բարերար հռչակել։ Եթէ նկատելի յետին մտքերով նրա մասին պահ մի հետաքրքրվում են և մեծաձայն բարբառով ճառեր արտասանում, հայը թողնում է իր գործը, մինչև իսկ նաւերն է վառում և ոգևորութեան ծայրահեղութեամբ՝ այդպիսի անձերի համար է ըսպառում իր խունկը։

Եւ խնկից նա անինայ և շռայլութեամբ, ամեն հասնողի։ Ով քիչ նրան յոյս տուաւ, քիչ նրանով հետաքրքրեց, հայը տուաւ նրան իր փողը, իր ուշադրութիւնը և ձեռքերը ծալելով կարծեց, որ կատարել է իր գործը, աւարտեց նրան։ Մի քանի չնչին, անհետևանք հարցապնդումներ, լոկ խօսքեր և գոռում—գոչիւններ՝ հայը ընդունում է որպէս փրկութեան խարիսխ, կառչում է նրան և բարձի թողի անում լրջութեամբ, ուքնութեամբ սկսած գործը։

Այս բոպէիս հայը նմանում է մի ոտքի վրայ կանգնած արագիլի, որ ջրի մէջ գորտը տեսած լինելով՝ բաւականանում է, և կարծում է որ նա ինքն իրան գալու է իր կտուցի մէջ շնորհիւ ջրերի շարժումին։

Բայց մի՞թէ փորձերը բաւական չէին ցոյց տալու որ գորտը ահագին ալեկոծութիւնների է դիմադրել, նրանց հարուածների վրայ ծիծաղել և կամ խորամանկութեամբ նրանց հարուածների ոյժը ոչնչացրել։

Ուրախութիւնից լիմարացած, վառում է հայը իր նաւերը՝ հէնց որ օտարը մի քիչ հետաքրքրվում է իրենով. վառելուց յետոյ նա պատրաստում է իր խընկերը և ծիսում այս և այն պուռոտախօսների քթի տակ, ոգևորվում նրանց փքքուն ճառերից և կարծում է որ ահա միսիան կը գայ...

Շատերն իսկ «խոհեմութիւն» են համարում, գործի համար անհրաժեշտ են նկատում այդպիսի ընթացքը. նրանք պատւիրում են լռութիւն, անշարժութիւն և այդպիսով աւելի պնդում են մեզ՝ մեր վարգագոյն երազներով և չընչին ցոյցերից յոյսեր ստանալու՝ երեխայական յատկութեան մէջ։

Յոյսերը չեն կշտացնում. ճշմարիտ է, յոյսն է որ այսպիսի կեանքը քիչ տանելի է դարձնում մեզ, բայց չէ՞ որ յուսով կշտանալը մեզ կարող է անյոյս մահւան հասցնել։ Ի՞նչու ունկն դնելով օտարի, հեռու աղմուկներից, ծածկել մեր ձեռքերը և անգործ նստելուց բացի մինչև իսկ պարել ու խնդալ։ Եթէ այդ աղմուկները, օտարի շեփորները իրենց օգուտը կունենան—աւելի լաւ, իսկ մեզ հարկաւոր է աւելի քան երբէք՝ գործել և աշխատել, հանգամանքներից օգուտել, օտարի աղմուկին նեցուկ տալ, մեր գոյութիւնը չը մուրալ, այլ պահանջել, շահել մեր քրտինքով։

Յոյսը լիովին դնել օտարի մեր օգտին խօսածների վրայ—դա անմտութիւնից աւելի է, դա մեզ կը հասցնի վերջ ի վերջոյ մի այնպիսի կոպիտ յուսախաբութեան, որ այլ ևս ուշ կը լինի գուցէ վերսկսել՝ խաբեբայից կիսատ թողած գործը։

Ոգևորուելը վատ բան չէ, բայց չափ ունի։ Ի՞նչ հարկ կանգ առնել, այրել նաւերը։ անշարժութիւնով ոչնչացնել սկսած գործը և յոյս դնել որ օտարի աշխատութիւնը մեզ կը կերակրի... Կանցնեն օրեր, օտարի հետաքրքրութիւնը կը սառի, կը դադրին նաև նրա ճառերը, կը ցնդեն օդի մէջ և մեզ այս անգամ կը թողնեն մեր գործերի սոսկալի աւերակների վրայ...

Գործենք քանի ուշ չէ. չը կշտանանք ունայն յոյսերով....

Վ. Խ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԱՏԵՐԸ ՄԵՐ ՄԷՋ ՊԱԿԱՍ ՉԵՆ

Երեք տարի առաջ Նահանգիս Ալալան գաւառում, մի հայ որն պարապվում էր տեղային վաճառականութեամբ, կողոպտվում է մի պարսիկ խանից և զրկվում ստացուածքից, որ մօտ երկու հազար թումանի կը հասնէր։

Խեղճը գալիս է աստ դիմում կառավարութեան, բայց բաւականութիւն չը ստանալով, գնում է Թէհրան դիմում Ն. Բ. Սադրազամին և Վեհ. Շահին։ Ընդունվում է գանգատը, բայց զանազան «զարէ հաց» տուեց մեզ, երբ բոլոր աշակերտների սէրն ու համակրանքը վայելող ուսուցչի տեղ, բոլորից ատուած մարդը նշանակեց, երբ՝ ձեզ այնքան պաշտողներիս՝ «սամարացիներ, բառիս բուն նշանակութեամբ, անպիտաններ» կոչեց, երբ ամբողջ ուսումնական տարւայ ընթացքում զէթ մի անգամ չը բարեհաճեց ներկայ լինել մեր զբաղմունքներին, երևի մեզ դժբաղդներիս աւելի ստոր դասելով, քան իր շնորհները վայելող ապաշնորհ «ձրիակերները»։ Մեր ոգևորութեան, մեր ջերմ սիրոյ և անձնուիրութեան փոխարէն Ձերդ Վեհափառութեան կողմից միայն արհամարհանք, անտարբերութիւն և դուանք նրկատեցինք դէպի մեզ. (Ձերդ Վ. բարեհաճել է ասել հետևեալը—«ես այդ ուսանողներէն զզվել եմ»)։ Մեզ համար մինչև այժմ հանելուկ է մնացել, թէ ինչու մեր բոլորիս պաշտած, գթասիրտ Հայրիկը տարւայ սկզբին սպառնաց արձակելու մեզ՝ ուսանողներիս և դրանով տարտամ վիճակի մէջ դրեց։ Թէ որքան անախանձելի էր մեր դրութիւնը ամբողջ ուսումնական տարւայ ընթացքում, այդ մասին թողնում ենք մտածել միայն մեր վիճակով հետաքրքրուողներին. բայց չենք կարող չը յիշել հետևեալը, որ Ձերդ. Վեհափառութեան ուած «զարէ հացը» իր կատարեալ կուսակցականութեամբ և կամայականութեամբ նրպատեց մեր վիճակի վատանալուն (խօսքը Սարգիս եպիսկոպոսի մասին է)։ Թէ նա կուսակցական է եղել և է նոյն իսկ այժմ, դրա համար պերճախօս փաստեր շատ ունենք. առաջ բերենք ի գիտութիւն Ձերդ Վեհափառութեան շատերից մի քանիսը։

Ա. Հէնց սկզբից, երբ սրբազանը ճեմարան եկաւ, մի շարք փոփոխութիւններով ցոյց տրուեց կանխակալ կարծիքներ աշակերտների մասին։ Աշակերտների մեծ մասը նրա աչքում «այծեր» էին, իսկ մի փոքրիկ խմբակ—գառներ. նա իր ամբողջ տեսչութեան ընթացքում փայփայել է այդ ընտրեալ «գառներին» և հալածելով հալածել է դժբախտ «այծերին»։ Տարւայ սկզբում ս. հայրը մի քանի անգամ ասեց և կրկնում էր ողջ տարւայ ընթացքում, որ իր նպատակն է զատել այծերին գառներից և այդ ցոյց է տալ գործով.—այդպէս հէնց եկաւ թէ չէ, մատենադարանից հալածեց «այծերին» և նրանց տեղ նշանակեց «գառներին» թէև այդ «այծերը» մատենադարանում երկար ժամանակ գործելով, լաւ հմուտ էին գործին, իսկ «գառները» միայն գառների չափ էին հասկանում այդ գործը. բայց ի՞նչ արած՝ «հարազատ» անշնորհը զաւակը, աւելի գերադասելի է քան օտարի շընորհալին։ Զարմանալին այն էր. Վեհափառ Տէր, որ այս մի և նոյն սրբազանը, ինքը վերաբերելով աշակերտներին, որպէս հարազատ և անհարազատ զաւակների, մեզ յորդորում էր, որ մենք աշակերտներս միմեանց ընդունենք, որպէս հարազատ եղբայրներ, հակառակ իր տուած անձնական օրինակին։

Բ. Հինգերորդ դասարանցի մի աշակերտ այլանդակ գոյներով արձանագրում է իր ընկերների անմեղ խաղերը, որոշ չար դիտումներով. ընկերներն իմանալով այդ՝ խնդրում են սրբազանից, որ այդպիսի ստոր ընկերոջը հեռացնէ իրենցից. սրբազանը պատասխանում է «աւելի շուտ ես կը համաձայնեմ բոլորիդ արձակել ճեմարանից (թւով 40 հոգու) քան թէ նրան» և այդ հասկանալի է—յանցաւորը հարազատներից էր և վարչութեան օգտակար անդամներից։

Գ. Գիւղի եկեղեցում մեծ հրապարակախօս Գրիգոր Արծրունու յիշատակին հոգեհանգիստ էին կատարում, ուսանողներս թոյլտուութիւն խնդրեցինք հոգեհանգստին ներկայ լինելու, մանաւանդ որ քարոզ էր խօսելու։ Սրբազանը պատասխանեց. «Առանց բացաղրութեան. ես միանգամայն արգելում եմ այդ հոգեհանգստին ներկայ գտնուելը»։

Դ. Թէև մենք աւելի մօտ լինելով ճեմարանին՝ աւելի յարմտրութիւն ունէինք կառավարելու ճեմարանի վերակացուներով, այնուամենայնիւ սրբազանը նշանակեց մեզ վրայ երկու

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Հապիւ նոր խաղաղացած ճեմարանը բարեփոխութիւնների էր ենթարկվում, երբ վրայ հասաւ Ձերդ Վեհափառութեան դիմաւորելու բոպէն, և մենք բուռն ոգևորութեամբ ու կէցցէներով դիմաւորելով ձեզ՝ դիմաւորում էինք մեր փափագների և իղձերի իրագործողին։ Ձեզանից էր կախուած մեր դաստիարակութեան հիմնական բարեփոխութիւնն ու նորոգումն և ձեզանից էինք սպասում ընդունել մեր նախկին վէրքերի սպեղանին։ Եթէ այս ամենի վրայ աւելացնենք նաև այն տպաւորութիւնը, որ ներգործեցին մեզ վրայ Ձերդ Վ. հետևեալ խօսքերը, թէ «ձեր գրչին հետ բահն ու բրիչն ալ պիտի միացնեմ» կամ «աստուածաբանութիւն, որ կաւանդուի ձեզ, չոր ու ցամաք ուսմունք մ'է, ուր պղատոնական սառնութիւն կը տիրէ». «ուսուցիչներ պիտի ներշնչեն երենց կենդանի ոգին սաների մէջ», «ես վերահասու ըլլալու եմ ձեր դասերին» և այլն... այն ժամանակ ձերդ Վեհափառութեանը յայտնած կը լինենք մեր սպասածի և ակնկալութեան չափն ու սահմանը։

Սակայն որքան մեծ եղաւ մեր վիշտը, երբ մեր այնքան պաշտած Հայրիկը «ցորենի հայս տաւաւ, քիչ նրանով հետաքրքրուեց, հայը տաւաւ նրան իր փողը, իր ուշադրութիւնը և ձեռքերը ծալելով կարծեց, որ կատարել է իր գործը, աւարտեց նրան։ Մի քանի չնչին, անհետևանք հարցապնդումներ, լոկ խօսքեր և գոռում—գոչիւններ՝ հայը ընդունում է որպէս փրկութեան խարիսխ, կառչում է նրան և բարձի թողի անում լրջութեամբ, ուքնութեամբ սկսած գործը։

Այս բոպէիս հայը նմանում է մի ոտքի վրայ կանգնած արագիլի, որ ջրի մէջ գորտը տեսած լինելով՝ բաւականանում է, և կարծում է որ նա ինքն իրան գալու է իր կտուցի մէջ շնորհիւ ջրերի շարժումին։

Բայց մի՞թէ փորձերը բաւական չէին ցոյց տալու որ գորտը ահագին ալեկոծութիւնների է դիմադրել, նրանց հարուածների վրայ ծիծաղել և կամ խորամանկութեամբ նրանց հարուածների ոյժը ոչնչացրել։

Ուրախութիւնից լիմարացած, վառում է հայը իր նաւերը՝ հէնց որ օտարը մի քիչ հետաքրքրվում է իրենով. վառելուց յետոյ նա պատրաստում է իր խընկերը և ծիսում այս և այն պուռոտախօսների քթի տակ, ոգևորվում նրանց փքքուն ճառերից և կարծում է որ ահա միսիան կը գայ...

Շատերն իսկ «խոհեմութիւն» են համարում, գործի համար անհրաժեշտ են նկատում այդպիսի ընթացքը. նրանք պատւիրում են լռութիւն, անշարժութիւն և այդպիսով աւելի պնդում են մեզ՝ մեր վարգագոյն երազներով և չընչին ցոյցերից յոյսեր ստանալու՝ երեխայական յատկութեան մէջ։

Յոյսերը չեն կշտացնում. ճշմարիտ է, յոյսն է որ այսպիսի կեանքը քիչ տանելի է դարձնում մեզ, բայց չէ՞ որ յուսով կշտանալը մեզ կարող է անյոյս մահւան հասցնել։ Ի՞նչու ունկն դնելով օտարի, հեռու աղմուկներից, ծածկել մեր ձեռքերը և անգործ նստելուց բացի մինչև իսկ պարել ու խնդալ։ Եթէ այդ աղմուկները, օտարի շեփորները իրենց օգուտը կունենան—աւելի լաւ, իսկ մեզ հարկաւոր է աւելի քան երբէք՝ գործել և աշխատել, հանգամանքներից օգուտել, օտարի աղմուկին նեցուկ տալ, մեր գոյութիւնը չը մուրալ, այլ պահանջել, շահել մեր քրտինքով։

Յոյսը լիովին դնել օտարի մեր օգտին խօսածների վրայ—դա անմտութիւնից աւելի է, դա մեզ կը հասցնի վերջ ի վերջոյ մի այնպիսի կոպիտ յուսախաբութեան, որ այլ ևս ուշ կը լինի գուցէ վերսկսել՝ խաբեբայից կիսատ թողած գործը։

Ոգևորուելը վատ բան չէ, բայց չափ ունի։ Ի՞նչ հարկ կանգ առնել, այրել նաւերը։ անշարժութիւնով ոչնչացնել սկսած գործը և յոյս դնել որ օտարի աշխատութիւնը մեզ կը կերակրի... Կանցնեն օրեր, օտարի հետաքրքրութիւնը կը սառի, կը դադրին նաև նրա ճառերը, կը ցնդեն օդի մէջ և մեզ այս անգամ կը թողնեն մեր գործերի սոսկալի աւերակների վրայ...

Գործենք քանի ուշ չէ. չը կշտանանք ունայն յոյսերով....

Վ. Խ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԱՏԵՐԸ ՄԵՐ ՄԷՋ ՊԱԿԱՍ ՉԵՆ

Երեք տարի առաջ Նահանգիս Ալալան գաւառում, մի հայ որն պարապվում էր տեղային վաճառականութեամբ, կողոպտվում է մի պարսիկ խանից և զրկվում ստացուածքից, որ մօտ երկու հազար թումանի կը հասնէր։

Խեղճը գալիս է աստ դիմում կառավարութեան, բայց բաւականութիւն չը ստանալով, գնում է Թէհրան դիմում Ն. Բ. Սադրազամին և Վեհ. Շահին։ Ընդունվում է գանգատը, բայց զանազան բարերելով աշակերտներին, որպէս հարազատ և անհարազատ զաւակների, մեզ յորդորում էր, որ մենք աշակերտներս միմեանց ընդունենք, որպէս հարազատ եղբայրներ, հակառակ իր տուած անձնական օրինակին։

Բ. Հինգերորդ դասարանցի մի աշակերտ այլանդակ գոյներով արձանագրում է իր ընկերների անմեղ խաղերը, որոշ չար դիտումներով. ընկերներն իմանալով այդ՝ խնդրում են սրբազանից, որ այդպիսի ստոր ընկերոջը հեռացնէ իրենցից. սրբազանը պատասխանում է «աւելի շուտ ես կը համաձայնեմ բոլորիդ արձակել ճեմարանից (թւով 40 հոգու) քան թէ նրան» և այդ հասկանալի է—յանցաւորը հարազատներից էր և վարչութեան օգտակար անդամներից։

Գ. Գիւղի եկեղեցում մեծ հրապարակախօս Գրիգոր Արծրունու յիշատակին հոգեհանգիստ էին կատարում, ուսանողներս թոյլտուութիւն խնդրեցինք հոգեհանգստին ներկայ լինելու, մանաւանդ որ քարոզ էր խօսելու։ Սրբազանը պատասխանեց. «Առանց բացաղրութեան. ես միանգամայն արգելում եմ այդ հոգեհանգստին ներկայ գտնուելը»։

Դ. Թէև մենք աւելի մօտ լինելով ճեմարանին՝ աւելի յարմտրութիւն ունէինք կառավարելու ճեմարանի վերակացուներով, այնուամենայնիւ սրբազանը նշանակեց մեզ վրայ երկու

զան պատճառներով յետաձգվում է վըճիռը։ Խեղճի ընտանիքը գտնվում է Դավրէժում յետին թշուառութեան մէջ, այնպէս որ Դավրէժի բարեսէր հայերը երեք անգամ փող հանգանակելով հացի փող են տուել, վերջերս էլ ապրում են բողոքականների հովանաւորութեամբ։

Այսպիսի մի հանգամանքում տեղոյս մի ոմն գիւղական վաշխառու Յովհաննէս, որ յիշեալ Թէհրան գնացողի մօտ բարեկամն է, իր մի բարեկամի հետ, որ տեղս մի մեծ տան գործակատար է և վաշխառուից էլ ցած ոգի ունեցող, հեռագրում են Թէհրան ստելով խեղճ հայի արդար պահանջը։ Իսկ արդարադատ Սադրազամը պատասխանում է վատերին «թո՛ղէք չարութիւններդ»։

Արդեօք ամաչեցին վատերը լսելով այդ կծու պատասխանը։ Լսում ենք որ շուտով գործին վերջ պիտի տան և հայը պիտի վերադառնայ աստ. արդարութիւնը միշտ կը յաղթանակէ վատեր, ամօթ երեսներիդ, նախատինք ճակատներիդ։

Սուրէն

Ռաշտ 30 մայիս 95

ՆԱՄԱԿ ԷՆԶԷԼԻՑ

—

27 մայիս 95

Էնզէլիում հայերը քիչ են. 5—6 տուն միայն, որոնցից մեծ մասը զբաղվում են գինեպանութեամբ։ Բայց, ինչպէս ինձ ասացին, ցրուած կան ուրիշ ընտանիքներ էլ և ուսանելու համար 10—15 մանուկներ կարող են տալ։ Նաւահանգիստը եկեղեցի ունի, իսկ դպրոց ոչ։ Լիանոզովը խոստացել է ազգային հողի վրայ կառուցանել մի դպրոց, բայց մինչև այժմ դեռ ոչ մի ձայն չը կայ։ Իսկապէս, եթէ այդ հարուստ անձը կամենում է շէնքը կառուցանել, հարկաւոր է որ նա շտապի. դա մի մեծ բարութիւն կը լինի իր կողմից՝ Էնզէլեցւոց համար։

Տնտեսական մասի համար վախենալու պէտք չը կայ. ռաշտեցոց պէս այստեղացիք էլ ուսումնասէր են և այդ՝ բարերար հանգամանքների շնորհիւ. գիւղաքաղաքը նաւահանգիստ է և շատ մօտ Կովկասին։ Կան օտարական վաճառականներ էլ, որոնք ոչինչ չեն խնայել անշուշտ դպրոցի համար։ Էնզէլիում բաղուցի երկու հայեր—մէկը մի ինժինէր որ կամենում է տասնեակ հազարներ դիզել, իսկ միւսը մի յայտնի հարուստ ապէրի՛ ազգական՝ բաց են արել մի նէֆտի զտման գործարան, որպէս զի քանի Ռուսաստանում սև նէֆտի վրա տուրք չէ դրուել, սրանք մեծ քանակութեամբ բերեն այստեղ, զտեն և ողողեն Պարսկաստանը, միանգամայն իրենք էլ, երբ տասնեակ հազարներ շահել են, մնաս բարև ասեն և գնան։

Դժբաղդաբար մեր փառաւոր մօրուքով ինժինէրը տնտեսական գիտութիւններից, մանաւանդ հասարակ առևտրական լօգիկայից շատ խղճալի հասկացողութիւն ունի։ Ենթադրենք պահ մի, որ ռուսաց կառավարութիւնը նէֆտի վրայ տուրք դրեց մի տարի յետոյ և այդ մի ազատ տարուայ ընթացքում պարոն ինժիներս փոխադրեց Էնզէլի 1 միլիոն փութ նէֆտ։ Նախ՝ ո՞ւր պիտի տեղաւորի այդ նէֆտը, չէ՞ որ ամբարների համար նէֆտի վրա տուելիք տուրքից աւելի ծախս կը նստի. երկրորդ, եթէ այդ միլիոն փութը պըրծաւ՝ յետոյ ի՞նչ պիտի անի. տուրքով նէֆտ պիտի բերի և այն ինչ որ Բագուի մէջ են անում։ Չէ՞ որ Բագուի գործարանները, որոնք օժտուած են աւելի նպաստաւոր հանգամանքներով, կը նըկատեն այն ժամանակ, որ մի ինչ որ երկարամօրուք ինժիներ ուզում է իրենց առաջը կտրել, այն ժամանակ նէֆտի գինը կիջեցնեն, իսկ Էնզէլիի գործարանը անկարող այդպիսի մրցման դիմանալ՝ կը մեռնի, կը ոչնչանայ...։ Այս և այսպիսի այլ ուրիշ տնտեսական տարրական բաների անգիտենալու դեպքանքը խիստ կորստաբեր է լինում այդ գործարանի համար, որ արդէն շքեղապէս շինուել է և սկսել է գործել։ Աստուած անի որ սխալուած լինինք. այդ ապագայն ցոյց կը տայ։

Առ հասարակ Էնզէլին քիչ Կովկաս է հոտում, մի քիչ քաղաքակրթութիւնը իր ոտքը սկսել կոխել է նրա ափերում. մինչև իսկ մի շքեղ հիւրանոց կայ, ուր մի սենեակում մի գիշեր անցկացնելու համար հարկաւոր է 9 ղրան (ամենապակասը 5) վճարել, դա այլանդակապէս թանգ է թւում, բայց խեղճ հիւրանոց պահողն էլ իր պատճառները, չքմեղանքները ունի։

Մեծ վաճառականութիւնը հայերի ձեռքն է. աչքի են խփում Թումանեանցների գործերը. այս բոպէիս մի սիրուն շոգենաւ հասաւ այստեղ, որ Թումանեանցներին է պատկանում և կրում է տան նահապետի—Թումանի անունը։ Գնում եմ Բագու։

Վ. Փ.

ՆԱՄԱԿ ՄԱՐԱՂԱՅԻՑ

—

4 մայիս 95

«Ոչ մի ժամանակ մեզանում կուսակցական կռիւները այնքան սուր, թշնամական կերպարանք չեն ստացել, ինչպէս այժմ, ոչ մի ժամանակ մեր ազգային գործերը այն աստիճանի անսանձ կամայականութեան չեն մատնուել, ինչպէս այսօր։

Մի տիրացու, կոպիտ վարժապետի սրիկայական արարմունքները պատճառ են դառել ամբողջ քաղաքի հայ հասարակութեան իրար զարկուելուն և ազգային գործերի թափուր, երեսի վրայ ընկած մնալուն։

Երեք տնձնաւորութիւններ—վաշխառու ուստա Պետրոսը, տեղական նենգամիտ քահանան ու «Ֆալչի» Յոնան վարժապետը—մի հզօր երրորդութիւն կազմած՝ էլ խաղ չը մնաց, որ չը խաղան մեր խեղճ հասարակութեան գլխին։

Նրանք շարունակ խառնակութեան, ատելութեան ու թշնամութեան սերմեր են ցանում մեր ժողովրդի մէջ, գրգռում են նրան ժողովրդին—ընդդէմ տէր Տաճատ քահանայի և պարոն Միրզա Աֆթանդիլեանցի, որոնք, ուղիղն ասած, չեն խնայում ոչ մի աշխատանք, ճիգն ու ջանք ազգի առաջադիմութեան ու լուսաւորութեան համար։

Քանի օրէ՞ էր արդէն, որ մեր ուսումնարանը հասարակութեան մէջ տիրող շփոթութեան պատճառով, որի ըսկզբնապատճառը Յովնան վարժապետն էր դառել, փակ էր մնացել. բայց այսօրուանից կրկին բաց է անում տէր Տաճատ քահանան և շարունակում է ինքը միայնակ դասաւանդութիւնը։

Հաստատ աղբիւրից տեղեկացել ենք, որ շուտով այստեղ պիտի գան Յ. Սարաճեան և Խ. Դատեան վարդապետները մեր ազգային խառն, խճճուած գործերը կարգի բերելու։

Երբ այդ հոգևորականները շնորհ կը բերեն մեր քաղաքը և կսկսեն իրենց գործունէութիւնը, կը գրենք մենք «Շաւիղին» նրանց գործունէութեան հետևանքը։

Ներսէսի

վերակացու, մինչդեռ ուսանողների մի խմբակ առանց վերակացուների հսկողութեան՝ ապրում էին ճեմարանից հեռու չինութեան մէջ։

Ե. Սրբազանը խորութիւն է դրել ոչ միայն ներքին, այլ և արտաքին յարաբերութիւնների մէջ. այսպէս—մինչդեռ վերոյիշեալ խմբակը ազատ մուտք ունի ամբողջ միաբանութեան մօտ, միւս մասը բոլորովին զրկուած է այդ իրաւունքից։

Զ. Տարուայ ընթացքում մեր մասին տարածուած չինծու լուրերը և զրպարտութիւնները հերքելու համար քանիցս դիմել ենք սրբազանին. բայց նա միշտ խոյս է տուել և ամբողջ տարուայ ընթացքում միայն մի անգամ է այցելել մեզ, այն էլ այն ժամանակ, երբ՝ հակառակ նոյն իսկ վարչական միւս անձերի ցանկութեան՝ իր հրամանով ուսանողներին երկու խմբի բաժանեցին։

Այլ ևս աւելորդ համարելով նրա կուսակցականութեան փաստերը թուելու, գուցէ Զ. Վեհափառութիւնն իսկ ձանձրանայ,—խնդրում ենք ուշադրութիւն դարձնել հետևեալ կէտի վրայ։—Ամենքին յայտնի է որ բոլոր ռուսահայերը՝ մեծից մինչև փոքրը՝ երկու կուսակցութեան են բաժանուած, յառաջադիմական և պահպանողական—յետադիմական անուններով. սրբազան տեսուչը պատկանելով վերջին կուսակցութեան (այդ հէնց ինքը խոստովանեց), հալածելով հալածել է իրեն յանձնուած հիմնարկութեան մէջ այն բոլոր անձնաւորութիւններին՝ լինէր նա ուսուցիչ, վերակացու թէ աշակերտ՝ որոնց մէջ նկատելի է համակրանքի և յարգանքի նշաններ դէպի հակառակ կուսակցութեան պատկանող անձերը և նրանց վերաբերեալ գործերը։ Մեծերը բաժանուած են հակառակ կուսակցութիւնների, թող կուեն միմեանց հետ, որքան իրենց հաճելի է. բայց աշակերտներին և ուսանողներին «այծեր», «լրբեր» «անամօթներ» և «ճեմարանն ապականողներ» կոչել, որովհետև նրանք կամեցել են մասնակցել դերապատիւ Արիստակէս եպիսկոպոսի Ջողակաթ վանքում անելիք պատարագին, կամ ցանկութիւն են ունեցել այս ինչ կամ այն ինչ միաբանին այցելել—այդ դատապարտելի է և միանգամայն անարդարացի։ Թող դատեն իրըև աշակերտների, թող աչքի առաջ ունենան սաներին, նրանց բարոյական և մտաւոր յառաջադիմութեան աստիճանով և ըստ այնմ նրանց դատաստանեն, կամ վարձատրեն գովեստներով բայց կուսակցական դիտումներով առաջնորդուելով՝ վրէժ հանել անմեղ սաներից, դա նշանակում է մեղանչել մարդասիրական և բարոյականութեան սկզբնական կանոնների դէմ։ Միթէ՞ մինչ այն աստիճան պիտի կուրանար ս. տեսուչը կուսակցականութեամբ, որ ճեմարանի և նրա սաների վրայ տարածուած ստայօդ զրպարտութիւնները և հնարովի հրէշաւոր լուրերը հերքելու կարիքը չը զգար. միթէ իր համար ցանկալի է անկրօն և անհաւատ աշակերտներին հսկել տեսչական պաշտօնի բարձրութիւնից։ Եթէ օտար, չարաթոյն բերանները սանձահարելու անընդունակ է զգում իրեն, զոնէ իր ստորադրեալ ուսուցչին խրատէր, որ իր աշակերտներին լրագրութեան մէջ համբակ չանուանի։ Տեսէք Վեհ. Տէր, այսպիսի տգեղ երևոյթները և անպատաւաբեր դէպքերը կարող են արդեօք ճեմարանի հանապազութիւնը և անդորրութիւնը. մինչև իսկ գոյութիւնը յարատև անել, և ով կը լինի արդեօք յանցաւորը, եթէ այսպիսի պայմաններում ճնշուող աշակերտների տրտունջները—ըմբոստութիւններ, բողոքները—ապստամբութիւններ, իսկ յօդուտ ճեմարանի խաղաղութեան արած պահանջները—տգեղագործան ցոյցեր համարեն Վահան, Կիւրեղ, Գարեգին և այլ սրանց նման ճնշուած ուղեղներով վարդապետների աչքում, որոնք առիթ չեն փախցրել յարմար ըոպէին յարձակուել և առատ բամբասանքներ թափել ճեմարանի սաների գլխին նոյն իսկ սուրբ եկեղեցու բեմից։

Այս բոլորից յետոյ, իրըև ճեմարանի սրտացաւ բարեկամներ, կարևոր համարեցինք ի զեկուցումն Զերդ Վեհափառութեան, կարճառօտ կերպով յիշել հետևեալը։

Քանի որ ճեմարանում բուն կը դնեն անկիրթ, տգէտ կուսակցական և կամայական տեսուչներ, քանի որ ուսուցչական-մանկավարժական խորհրդի ձայնը աւելի ստոր արժէք կունենայ, քան թէ մի տգէտ տեսչի յամառ վճիռը, քանի որ կրօնական առարկաների փքուն անունների տակ կաւանդին անբարոյականացուցիչ և թմրեցնող սկզբունքներ, քանի որ «դարէ հացերը», թերուս վերակացուները անպակաս կը լինեն ճեմարանից—տարիների փորձը թող ապացոյց լինին, որ սաների բողոքները, տրտունջներն ու հրաժարականները անպակաս կը լինեն ճեմարանի կեանքում։

Թէև մեզ համար լայն ասպարէզներ և իւղալի պաշտօններ չը կան կեանքում. բայց և այնպէս հարկադրուած ենք ամենաթանկագին զոհաբերութեամբ բանալ մեր ճանապարհը դէպի կեանքի ալիքները, մեր ապագան իսպառ չը դժբաղդացնելու յոյսով.... Անելով այդ քայլը մենք վշտացած սրտով հեռանում ենք այստեղից և մեր մեծ բարերարի յիշատակի առաջ պատասխանատու ենք թողնում այն անձնաւորութիւններին, որոնց վրայ պէտք է ծանրանայ ճեմարանը կառավարելու մեծ և դժուարին գործը։

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Դավրէժ 1 յունիս 95

Բարեհաճեցէք տեղ տալ ձեր թերթի մի անկիւնում, իմ համառօտ խօսելիքս, որ պատասխան է «Շաւիղի № 18 Դավրէժից գրւած նամակին, որով և պարտաւորեցրած կը լինէք մեզ։

«Շաւիղի» № 18 կարդացինք «Պարոյական բարեսիրական» ընկ. վարչութեան յօդուածը, որ ի պատասխան էր «Շաւիղի» № 16 ներքին լուրերի մէջ եղած հաշիւների անճշտութեան լուրին։

Ճշմարիտ լաւ բան է, բարեգործական դիմակով ծածկուել, խեղճ ժողովրդից փող կորզել և յետոյ սխալ հաշիւ ներկայացնել և երբ պահանջում են հաշիւ ռանց ամաչելու հրապարակապէս լրագրի մէջ պատասխանել, թէ մենք ընկերութեան անդամներից բացի ոչ ոքի հաշիւ ներկայացնելու պարտաւոր չենք*).

Հա.... երևի վարչութիւնը ախորժակ ունի փող ուտելու։ Ի հարկէ ինչու պէտք է հաշիւ ներկայացնել. տարւայ վերջը կասէք թէ Արամեան դպրոցում ծախք ենք ունեցել այսքան.. (մի որ և իցէ գումար, որ հաւանական է ծախսածի կրկնապատիկը կը լինի։)

Բաւական է պարոններ! որտեղ է ձեր Արամեան դպրոցում ցոյց տւած գործը։ Մի քանի ձրիավարժ աշակերտներից առիթ ունեցանք տեղեկանալու, որ դուք Արամեան դպրոցում ոչինչ չէք արել. բացի անցեալ տարուց մնացած մի քանի հոտոր հին գրքեր ցրուելուց և մինչև անգամ առանց ամաչելու սխալ հաշիւ ներկայացնելուց։ Եւ երբ «Շաւիղի» № 16-ի մէջ կարդացի, «Պ. բարեսիրական» ընկ. անդամներից մէկին հարցրի (առանց «Շաւղի» հաշիւը ցոյց տալու) թէ որքան դրամագլուխ ունէք, անդամակցողը պատասխանեց թէ 250 թումանաչափ՝ սրբանից յետոյ հանեցի գրպանիցս «Շաւիղը» և ցոյց տուի իրենց ներկայացրած հաշիւը և ասեցի «բա ինչու 140 թումանի հաշիւ էք ներկայացրել» անդամակցողը պատասխանեց թէ մամուլի տակի սխալ է» եւ երբ երկուսս միասին անուանադիր կարդացինք և գումարեցինք, տեսաւ որ իսկապէս վարչութեան կողմից մի խորամանկութիւն եղել է (ուղիղ 100 թուման հաշուից պակասացրել են ով գիտէ ինչ նպատակների համար) ինքն էլ զայրացաւ. վարչութեան դէմ և գնաց հաշիւ պահանջելու։ Ի վերջոյ չը գիտեմ քանի թումանով գոհացրին որ այլևս ձայն չը հանեց. ի դէպս, եթէ ուզելու լինէք այդ պարոնի անունը ևս կը գրեմ ձեզ։

Վարչութիւն! եթէ փող ուտելու մրտադրութիւն ունէիր ինչու ուրեմն անդամներին առաջաւոր չը գոհացրիր, որ չը խայտառակուէիր։

Տեսէք ուրեմն Դավրէժի ժողովուրդք թէ ինչպէս մի խումբ ինտիլեգենտներ բարեգործական դիմակով ծածկուած քոարիւնդ են ծծում։

*) Որպէս և իրան պարտաւոր չի համարում տեղոյս Ընթերցասիրաց ընկերութեան կանձապահը....

Ծ. Խմբ.

Ուրեմն «Դ. Բարեսիրական» ընկ. վարչութիւնը կասկածների տեղիք չը տալու համար 1892-ից սկսեալ մինչ 1895 յունվար 1-ն մի առ մի անսխալ հաշիւ ներկայացնեն ենթադրելով որ վարչութիւնը փոխւել է, բայց ի հարկէ հաշուեմատեանները մնացած կը լինին։

Բ.

Խոյ 17 մայիս 95

Թոյլ տուէք «Շաւիղի» միջոցով մեր խորին շնորհակալութիւնը յայտնելու այն տիկիններին, օտար և տեղացի պարոններին, որոնք իրանց կամաւոր նուէրներով օգնեցին մեր նորաբաց ս. Վարդանեան վարժարանին։

Ի դիմաց հրգաբարձութեան
Խաչատուր Մ. Բաբեանց
Օհան Գրիգորեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Անցեալ շաբաթ «Շաւիղը» լոյս չը տեսաւ. բայց յամենայն դէպս մեր ընթերցողները մինչև տարւայ վերջը կըստանան ամբողջովին 50 համարները։

—

Բուլղարիայում մեր թերթին բաժանորդ գրւող ցանկացողները կարող են դիմել Ռուսճուք, մեր գործակալ պ. Ֆիլիպ Հազլեանին։

—

Ռաշտից մեզ տխուր լուրեր են հասնում։ Այնտեղի ուսուցչի դէմ գրւած ճշմարիտ տեղեկութեանց համար, մտադրւում են թակել տալ երեկոյեան ժամը 10-ին. մէկի՝ որին կարծում են յօդուածագիրը լինել։ Ուսուցչի յորդորանքով ամենալիրը և խայտառակ խօսքերով սպառնալեաց թղթեր են կպցրել պատերից, մէկ երիտասարդի հասցէին, որ ոչ մէկ կերպով չէ մասնակցել, գոնէ այս տարւայ սկզբից, Ռաշտի թղթակցութիւններին։ Այդ թղթերից մէկը արդէն գրտնվում է խմբագրութեանս մէջ։ Եթէ ուսուցիչը մի որ և է արդարանալու տեղ կարող էր ունենալ իր բռնած վատ և զզուելի ընթացքների մէջ, այս դէպքը բոլորովին թոյլ է տալիս մեզ կարծելու, վերջապէս, նրա՝ դեռ ուսուցչութիւնը մէկ կողմ թողած, և ինչ կարգի մարդ լինելը։ Մեղք մեր դպրոցներին որ այդպիսի սրիկաների շահատակութեանց ասպարէզ են դարձել։

—

Եկող համարից կը տպագրենք Ռաշտի ուսուցչի և մի ուրիշի հերքումները անփոփոխ, որոնց մասին և կը յայտնենք մեր կարծիքը։

—

Մէկ մասնաւոր թղթակցութիւնից քաղում ենք, որ Ն. Ջուղայում երեք օրւայ տևողութեամբ այն չափով թրուչկան մորեխներ են թափւել, որ արեգակի լոյսը խաւարացրել են. բուսականութեանը վնաս չեն հասցրել։

—

Խմբագրութեանս մէջ շնորհակալութեամբ ստացւեց Լումայի «Գաբօի Ընտանիք» վէպը, վերցրած Թիֆլիսի կեանքից։ Այդ վէպի հեղինակը շատ գեղեցիկ կերպով նկարագրում և հարւածում է ընտանեկան մի քանի զզուելի և կործանիչ սովորութիւնները, որոնք պատճառ են դառնում բազմաթիւ ընտանիքների թշուառութեանց և որոնց նըման սովորութիւններ և դէպքեր դեռ մինչև այսօր էլ դժբաղդաբար տիրում և կրկնվում են մեր, պարսկահայոցս մէջ ևս։

—

Ստացանք Ն. Ջուղայի Ամենափրկչեան վանքի և տպարանի, Ազգ. Կեդրոնական (տղայոց) և ս. Կատարինեան (օրիորդաց) ուսումնարանների, աղքատաց արկղի, ինն եկեղեցիների և Որբուհեաց խնամակալ ընկ. 1894 թւի հաշիւների համառօտութիւնը, կցւած Որբուհեաց խնամակալ ընկերութեան կանոնագրութիւնով։ Որպէս զի մեր ընթերցողները կարողանան գաղափար կազմել այդ հաշիւների մասին, մէջ ենք բերում առանց մանրամասնութիւնների, բոլոր այդ հաստատութեանց ընդհ. երևմուտքը։ Մուտք են ունեցել 83477 ղուռն 16 շահի և կէս. իսկ ելքը՝ 60592 ղուռն 17 շահի, որից երևում է որ 95 թւի յունվարի մէկին Ջուղայի հաստատութիւնները ունին կանխիկ 22885 ղուռն, բացի այն գումարները մի քանի տասնեակհազար գիլդրներ, որ պահվում են Կալկաթայում։ Գուցէ ուրիշ ժամանակ պատեհութիւն կունենանք այդ հաշիւների շատ աւելորդութիւնների մասին խօսել բայց այն ինչ որ իսկոյն և եթ, նրա մէջ, աչքի խորթ է երևում, դա 1) 1894 թւի Եսայի եպ. վերցրած ռոճիկն է 10000 ղուռն, մինչ դեռ անցեալ երեք տարիների ընթացքում նա վերցրել էր միմիայն 15000 ղուռն, այսինքն տարեկան 5000 ղուռն։ Նկատելի է և այն կէտը, որ Ջուղայի եպիսկոպոսները անձնական կամ ապրուստի համար և ոչ մէկ կոպէկի ծախս չունին, հապա ինչ են անելու այդ խոշոր գումարները։ 2) Ս. ծ. վ. Այվատեանի վերցրած ճանապարհածախսն է Էջմիածնից մինչև Ջուղա 1375 ղ., (մինչ դեռ նոյն ինքը վարդապետը, Թիֆլիսից Թէհրան բերւած ԵՐԿՈՒ ուսուցիչների որոշեալ 500 ղուռն ճանապարհածախսից 1 0 0 ղուռն էլ ղեղչեց որպէս աւելորդ. ինչ անուն տալ սրան)։ Աւելորդ է կրկնել հաշուետուութեան եղանակի մասին, որի համար անցեալում էլ խօսել ենք՝ բայց պէտք է ասել, որ ոչ մի հեշտութիւն չը կայ հաշիւները պարզ հասկանալու համար. ինչու համար աշխարհարար լեզուով և ամենանոր, ամենապարզ տոմարական ձևով չեն տալիս հաշիւները, և ինչու հաշուետետրի վերջում էլ կցուած չէ ընդհանուր մէկ ելևմուտք ևս։ Չը գիտենք մի և նոյն ժամանակ թէ՝ այդ հաշիւներից այս անգամ Ջուղայում էլ ցրւած կայ թէ անցեալ անգամւայ նման միմիայն գաւառները և օտար քաղաքները են միայն ուղարկւած։

—

«Մշակի» 53-որդ թւի յաւելւածը, որ բաղկացած է 4 երեսից, ամբողջովին պարունակում է միմիայն երեք մեծ պետութեանց, Բ. Դրան ներկացրած հայկական հարցին վերաբերեալ ծրագիրը և նրան կցուած մէմօրանդումը։

—

Դավրէժից մեզ գրում են որ։ Ամսոյս 13-ին Մուժումբար գիւղի մօտ 20—25 հոգի աւազակներ յարձակվում են մի խումբ հայերի վրայ, որոնք գնում էին գիւղը, տարել են 6 հրացան, 7 ձի, 3 ատրճանակ, 30 թուման փող, կանանց զարդեր և տան կահկարասիք. ընդհանուր կողոպուտը հասնում է 500 թումանի։

—

Ռաշտից մեզ գրում են հետևեալը. Ինչպէս լսում ենք, տեղոյս դպրոցների վարչութիւնը, վերջերս ունեցած մի նիստի մէջ որոշել է ներկայ ուսուցչին և ուսուցչուհուն արձակել, պարզ համոզւած լինելով, որ նրանց պահելը աւելորդ է, բայց ինչ կասէք, որ նոյն անձնաւորութիւնները, կրակ բռնած սկսել են բամբասել, հոգաբարձութեան քարտուղարին, ամեն տեղ նրա հասցէին ցեխ շպրտելով են զբաղւած, փորձը ինքն ըսա ինքեան ցոյց է տալիս նրանց նուաստութիւնը, թէ ինչ է պատճառը չը գիտենք, թող այդ մասին ինքը պ. քարտուղարը գրի։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

***Վերջապէս հայոց Կաթուղիկոսը իրաւունք ստացաւ Պետերբուրգ գնալու. շատ շատերը սպասում են այդ ճանապարհորդութիւնից՝ բարերար հետևանքներ մեր թիւրքահայ եղբայրների գործերի համար։ Բայց ի զուր լինելը պարզ է, որովհետև ռուսաց կառավարութիւնը իր նախօրօք որոշած քաղաքականութիւնը ունի այդ մասին։ «Մշակն էլ այդպէս է կարծում և դրան նուիրել է մի յօդւած։

***«Մշակի» մասին խօսելով յիշեցի մի բան։ Այս վերջերումս մեր յայտնի գրագէտ Ղազարոս Աղայեանը «սյնպիսի դրութեան մէջ է ընկել», որ ստիպւել է դիմել հանգանակութեան—քաղցածութիւնից չը մեռնելու համար և ահա այդ մուրացկանութեան համար «Մշակը» բացել է իր էջերը, ուր երբեմն մարդ ամօթով կարդում է այսպիսի տողեր «Ցօգուտ Ղ. Աղայեանի, այս ինչից ստացանք 3 ր.»... ահ, որպիսի դրութեան ենք հասել. այդքան ստորացնել մի գրագէտի՝ իսկ գրագէտը... չը կարողացաւ միթէ իր նախորդների պէս քաղցած մնալով մեռնել, քան դիմել այդպիսի ստորացուցիչ միջոցների։ Բայց, որքան մեզ յայտնի է, պ. Աղայեանը հողեր ունի և կարող է մի կերպ քարշ տալ իր գոյութիւնը գիւղում եթէ այդ այդպէս է, ինչու է ուրեմն թոյլ տալիս որ մարդիկ մի քանի բուրլի ձգեն իր ձեռքը, որպէս զի քաղցած չը մնայ։ Մեր կարծիքով «Մշակը» չը պէտք է ընդունէր գրագէտին ստորացնող այդպիսի նպաստներ. էլ ինչացու է ուրեմն բարեգործական ընկերութիւնը, ինչացու այս և այն այդ տեսակ հաստատութիւնները։ եթէ 20—30 տարի գրականութեամբ զբաղւող մի անձի թոյլ է տրվում մուրալ իր ծերութեան վերջին օրերում՝ քաղցած չը մնալու համար։ Պ. Աղայեանին հարկաւոր է մեռնել, եթէ քաղցած է. մեռնել քան մուրալ, իսկ «Մշակին» էլ հարկաւոր էր

չը բանալ մի այդպիսի ստորացուցիչ հանգանակութիւն, Ամօթ, ամօթ բոլոր հայերին, որ թողնում են իրենց երկար ժամանակ ծառայող մի զրազէտի՝ բուրլիներով և կոպէկներով մուրալու դրութեան մէջ։ Գուցէ «Մշակը» կարծել է թէ պ. Ղազիանն էլ Գամառ-Քաթիպայի բաղդը կունենայ. սխալվում է. Գամառ-Քաթիպան անգոյն մարդ էր. նրան իրը բանաստեղծի՝ սիրում էին բոլորը, իսկ պ. Ղազիանցին որպէս յառաջադէմ կուսակցութեան մարդ էլ՝ ատում են յետադէմները. ամէնքս գիտենք որ հայը շատ աւել յետադէմներ—յիմարներ ունի, քան պ. Ղազիանցին այսպիսի դէպքում որպէս զրազէտի՝ գնահատողներ։ Մի խօսքով, մենք կարծում ենք, որ հարկաւոր է անմիջապէս ընդհատել այդ ստորացուցիչ նըպաստների հաւաքելը և պ. Ղազիանցին մընում է կամ մի կերպով ապրել և կամ հպարտութեամբ մեռնել քաղցածութիւնից և այդ մահը որպէս մի մեծ նախատինք՝ շպրտել հայի երեսին։

***Վերջերս լրագիրները հաղորդեցին որ Կարա-Մուրզան նորից սկսել է կոնցերտ տալ, մանաւանդ Բաղուի մէջ։ Վաղուց է ասկայն որ այդ պարոնը խմբեր է կազմակերպում, թքով թուղթ կպցնելու պէս այս և այն քաղաքում երգեր սովորեցնում և ապա անցնում է թողնելով որպէս հետ խմբական երգերից չը խրտնելու ճաշակը։ Ասենք ոչ ոք չէ խըրտնում ներդաշնակութիւնից. Կարա-Մուրզան երբէք չէ կարող ասել որ իրեն հալածել են հէնց այդ բանի մասին, որ իր խմբական երգերը վաս ընդունելութիւն են գտել և կամ թէ ունեցել է հակառակորդ։ Ոչ, քառաձայն երգերը ընդունվել են ամեն տեղ էլ սիրով և հաճութեամբ, նոյն իսկ եկեղեցական երգերում—եթէ նրանք լաւ են կազմուած։ Ուրեմն, ի զուր է Կարա—Մուրզայի գանգատը որ իրեն հալածում են, որ քառաձայն—խմբական երգերի դէմ են և այլն և այլն։ Դովելի է ի հարկէ նրա աշխատութիւնը, որ կազմում է խմբեր և մեզ վայելել է տալիս ներդաշնակ երգեր. բայց ախը չէ՞ որ իրաւունք ունինք պահանջելու նրանից, որ հայկական ժողովրդական եղանակները մշակէր, խմբականի վերածէր և իր կոնցերտներով մեզ նրանց մասին ճաշակ տար։ Կարա-Մուրզան հռչակում է, որ այդ աշխատութիւնը նա կատարում է և որ նրա ուած հայկական երգերը հայկական եղանակներ են և այլն. Կարա-Մուրզան առիթներ շատ և շատ է ունեցել և պէտք է որ ունենար մի ընտիր ժողովածու հայկական ժողովրդական երգերի։ Մինչ այդպէս չէ երևվում. զրա հակառակը նա Կովկասի բեմերի վրայ հնչեցնում է հայկական ժողովրդական երգերը այնպէս աղաւաղած, այնպէս փչացրած որ վերջերս իրաւամբ, մի քանի հասկացողներ բողոք բարձրացրին նրա այդ վարմունքի դէմ, իսկ Բաղուի «Kacпій» թերթը ուղղակի պախարակեց նրան։ Դիտէք արդեօք թէ նոյն թերթում մեր հոսոսը ինչպէս է արդարանում. —«Հայկական եղանակ զոյութիւն չունի» ասում է նա։ Այդ ասութիւնն անմիտ արդարացումը միայն ծիծաղ է շարժում, քանի որ ամեն մի փոքր ի շատէ գիտող անձ գիտէ որ հայը ունի եղանակներ, սեպհական ժողովրդական բնաւորիչ (caractéristique) երգեր Այրարատում, Վանում, Մուշում, լեռնոտ երկիրներինը տարբեր դաշտային երկիրների եղանակներից։ Ի զուր է կարծվում որ Թիւրքաց հայաստանում հաճախ լսող եղանակները քրդական են։ Քիւրդը մուզիկա չունի, մուզիկա բառիս երաժշտական նշանակութեամբ. նա ունի պօէմներ, որոնց երգում է մօնոտոն եղանակով, ճիշտ այնպէս որպէս պարսիկը կարդում է իր ս. գիրքը կամ Սադիի ու Հաֆիզի բանաստեղծութիւնները։ Քիւրդը, այսպէս ասած, աւելի խօսում է քան երգում. որոշ եղանակներ, որոշ երգեր երաժշտութեամբ չունի նա։ Ինչ որ կան Թիւրքաց-Հայաստանում որոնք ածվում են սրինգի վրայ, երգվում են պարածելու համար, նւագվում են ոչխար արածելու կամ ջուրը քաշելու համար—դրանք զուտ հայկական են։ Կարա-Մուրզան չէ ճանաչում այդ եղանակները և եթէ նրանցից մի երկու հատ չնչիններն էլ գիտէ, այն էլ վերին ասաիճանի աղաւաղած, փոփոխած... և այդպէս անզիտութեամբ է որ համարձակուել է նա Թիւրքահայոց կեանքից, մի ինչ որ Ասրպեսի խայտառակ ոսանաւորների վրայ հիմնուած՝ օպերա գրել... Ինչ անուն տալ այս տեսակ յանդգնութեան, իսկ յետոյ էլ ելնել և ուրանալ հայկական եղանակների, երաժշտութեան գոյութիւնը... Եթէ պէտք եղաւ, մենք մեր ասածները շատ ուրիշ փաստերով և ապացոյցներով էլ կը հաստատենք։

Վ. Փ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Հայրենիք» լրագրից քաղում ենք հետեւեալը։ Պաշտօնական զեկուցում. Վանի կուսակալութիւնը մայիս 13 թուականով հետեւեալ հեռագիրը ուղղած է Մեծ-Եպարքոսին։ «Տասնչորս հայեր, որոնց համար իմացած էր թէ Մահմուտիէ կաւառակին կողմէն օսմանեան սահմանագլուխն անցած են, առանց պատահարի ձերբակալեցան իրենց զէնքերով և հրանիւթերով։ Տեղւոյն գայմգամին տեղեկագրութեանը նայելով, այդ աւազակները վերայէն քիւրտի տարազ և տակէն քաղաքային հագուստ կը կրէին. Ասոնց վրայէն գտնուած են տասնմէկ հատ Մարթինի հէնրի ու ռուսական Պէրտան հրացան, վեց հատ ըէվոլվէր, տասը հատ դաշոյն, այդ հրացաններուն յատուկ 975 հատ փամփուշտ, նոյնպէս վնասակար գրքեր և դոգռիչ պատկերներ ու խօսքեր պարունակող շատ մը թուղթեր։ Ասոնց պետը հայ է և յայտարարած է որ երեք տարի առաջ Լոնդոն երթալով, միացեր է Հնչակ անուն հայ յեղափոխական ընկերութեան, թէ Մարսիլիայէն երեք հազար հրացան զներ է հայոց բաշխելու համար, թէ այդ զէնքերը ո և է կերպով չէ կրցեր օսմանեան երկիրները մտցնել և թէ հիմա ալ այդ եղանակաւ ձերբակալեր է,

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Հոնկքոնկ. 20 յունիս. Անգլիական ծովային զօրքը բանակ է դրել Անպինկում, ընդհանրութեան կեանքը և գոյքը պաշտպանելու սև դրօշակաւորների դէմ։ Կառավարութիւնը պահանջում է որ այդ զօրքը յետ կոչուի, բայց անգլիական հրամանատարը մերժել է այդ պահանջը։ Սև դրօշակաւորներից մէկ յարձակում սպասվում է, մեծ պատրաստութիւններ են տեսնուել այդ յարձակումին դիմադրելու համար։

Լոնդոն. 21 յունիս. Պալթիկ ջրանցքը բացուեց այսօր գերմանական կայսեր ներկայութեամբ։

Լոնդոն. 21 յունիս. Կ. Պոլսից եկած հեռագիրները հաղորդում են, որ երեք կառավարութիւնների դեսպանները ի զուր ջանացին համոզելու Բ. Դուռը. որ յայտնէ Հայկական բարենորոգումների ծրագրի այն կէտերը որոնց ուզում է վիճաբանութեան ենթարկել։ Ռուսական և ուուսաց թերթերը ընդդէմ են Տաճկաստանի վրայ ճնշում գործ դնելու. գաղափարին, և ամբաստանում են, որ Անգլիան իր շահերի համար է խառնուել այդ գործի մէջ։

Լոնդոն. 23 յունիս. Լորդ Ռոզբէրիի դէպի Վիենօր արած ճանապարհորդութեան նպատակն էր թագուհուն ներկայացնել նախարարութեան հրաժարականը որ և ընդունվել է և լուր է պտտում որ լորդ Սալզբիւրի մտադիր է մի նոր նախարարութիւն կազմակերպել։

Լոնդոն. 23 յունիս. Բ. Դուռը մեծ մտատանջութեան մէջ է Մակեդոնիայում տեղի ունեցած յաջող յուզմունքի համար։ Մակեդոնացիները պահանջում են, որ Բէրլինի դաշնագրի մէջ եղած բարենորոգումները մտցուին իրենց երկրում։ Մակեդոնական թերթը յայտնում է որ երկրի երեք կողմից յեղափոխութիւնը պայթել է։

Լոնդոն. 24 յունիս. Լորդ Սալզբիւրին այսօր առաւօտ գնում է Վիենօր հաւատացնում են, որ նա կը պնդէ պարլամենտի անմիջական լուծումը։

Լոնդոն. 25 յունիս. Լորդ Սալզբիւրին յանձն է առել մէկ նոր մինիստրութիւն կազմելու և բանակցում է պահպանողականների պարագլուխների հետ։

Լոնդոն. 25 յունիս. Լորդ Սալզբիւրի նախ քան երկրի կառավարութեան ղեկը ձեռք առնելը, ապահովութիւն է պահանջում որ զատամիտները ևս կը գործակցեն նախարարութեան կազմակերպութեան մէջ։ Այդ ապահովութիւնը դեռ նրան տրուած չէ։

Լոնդոն. 26 յունիս. Լուր է հասնում որ լորդ Սալզբիւրին ընդունել է ձեռք առնել կառավարութիւնը։

Լոնդոն. 26 յունիս. Լուր է տրվում, որ լորդ Սալզբիւրին ընդունել է կառավարութիւնը ձեռք առնել այն պայմանով որ պարլամենտը անմիջապէս լուծուի։ Լուր է տրվում նաև որ լորդ Սալզբուրու ազատամիտներից պահանջած պայմանները մերժուել են, բայց եթէ արդելքներ պատահին մինիստրութիւնը կազմելու մէջ, լորդ Սալզբիւրին կը հրաժարուի թողնելով, որ ազատամիտները իրենք լուծեն պարլամենտը։ —Բոլգարիայի և Տաճկաստանի մէջ յարաբերութիւնները լարուած դրութեան մէջ են. մակեդոնական խնդրի մասին։

Լոնդոն. 27 յունիս. Լորդ Սալզբիւրը ընդունել է մինիստրութեան մէջ բարձը կանցլերի պաշտօնը։ Կապինետի կազմակերպութիւնը շաբաթ օրուանից առաջ գլուխ չի գալ։ Լորդ Ճորճ Համիլթընը ընտրուել է, Հնդկաստանի կառավարութեան քարտուղար։

Լոնդոն. 1 յուլիս. Սուլթանը Շաքիր փաշային ընտրել է ասիական նահանգների վերահսկող, այդ ընտրութիւնը նկատվում է որպէս պետութեանց պահանջներից փախուստ տալու միջոց։ Մէնէլիք թագաւորի եղբօրորդին և ուրիշ ապստամբնացի դեսպաններ գնացել են Նիկոլայ կայսեր մօտ որից և մեծ ընդունելութիւն են գտել։—Բոլգարիան բացատրութիւն պահանջեց Բ. Դռնից այն հրահանգների մասին որ տրուած էին Աստրիանապոլսի տաճկաց հրամանատարին գործելու այնպէս ինչպէս ինքը յարմար է դատում բուլգարական սահմանագլխի վրայ. բոլկարական կառավարութիւնը նաև ծանուցում է տուել տաճկական կառավարութեան թէ ինքն էլ պիտի ստիպուի այդ դէպքում զինուորական միջոցների դիմել։

Լոնդոն. 2 յուլիս. Սպասվում է որ չինական փոխառութիւնը յաջող ելք կունենայ, գումարը Չինաստանը կստանայ դեկտեմբերին։ Չինական կառավարութիւնը պահանջում է որ ժապոնական զօրքը քաշուի Վէյ-Հայ-Վէյից նախ քան Լիտթունկ թերակղզին թողնելը։

Լոնդոն. 2 յուլիս. Բ. Դուռը ուղարկել է մի շատ մեղմ պատասխան Բոլկարիոյ պահանջած բացատրութիւնների վերաբերութեամբ, որ տուել է Աստրիանապոլսի տաճկաց հրամանատարին։

Ըրտօնատէր—Հրատարակիչ՝
ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ և ԾԱԽԻՈՒՄ Է ԽՄԲԱ ԳՐՈՒԹԵԱՆՍ ՄԷՋ

ՄԻՐՋԱ ԻՍԿԵԱՆԴԱՐ

(Պարսկական զրոյց)

ԳՐՔՈՅԿԸ

Գինն է 50 կոպ. կամ 3 զրան

2—3

ՓՈՐԱՃՃՈՒԻ (որկոչվում է ժապաւինաւոր որդ) (Solitaire Tenia) **ԴԷՄ ԽԻՍՏ ԱԶԴՈՒ ԴԵՂ.**

Փորձած «Շաւիղի» խմբագրութիւնից և զօրութիւնը երաշխաւորած։ Դեղը 3—4 ժամուայ ընթացքում ԶԴՈՒՄ է ՃՃՈՒԻ ԳԼՈՒԽԸ և լիովին ազատում նրանից։ Ոչ մի լեղուութիւն չունի. հարկաւոր չէ ոչ լուծողական և ոչ էլ ծոմապահութիւն։ Հարկաւոր եղած պատուէրները գրաւոր կերպով կուղարկվեն դեղի հետ։ Դեղը փոշի է։ ԳԻՆՆ է ՄԻԿ թուման (2 ռուբլի)։ Դիմել Թէհրան, Մահտեսի Յորդանան Եղեազարեանցին։ Téhéran (Perse) M. Hordanan Eliazarian։ Պատուէրները կատարվում են անմիջապէս և խնամքով։

1—3